Հետպատերազմյան իրականություն. հաղորդակցության խնդիրները

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Պատերազմից հետո մարդկանց վերադարձն Արցախ կազմակերպելու, ավերված տնտեսությունն ու ենթակառուցվածքները վերականգնել սկսելու, ինչ-որ կերպ Արցախում կյանքը կազմակերպելու համար առաջին հերթին կարիք կա վերականգնելու խաթարված հաղորդակցությունը արցախցիների հետ: Մարդիկ պետք է ստանան կայուն, ոչ իրարամերժ տեղեկություններ, ստանան դրանք հստակ պարբերականությամբ, որպեսզի ինչ-որ ժամանակ անց սկսեն հավատալ. մի բան, որ խաթարվել է պատերազմից հետո:

Վստահության վերականգնման կարևորությունը

Գաղտնիք չէ, որ այսօր Արցախում անվստահության մթնոլորտ կա պետության և պաշտոնական տեղեկատվության նկատմամբ. մարդիկ ցանկացած տեղեկություն ստանալիս փնտրում են տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ: Մարդիկ չափից շատ են իրենց խաբված համարում, որպեսզի միանգամից սկսեն հավատալ հրամցվող տեղեկատվությանը:

Տեղեկատվության դերը թե՛ պատերազմական իրավիճակում, թե՛ խաղաղ կյանք կայացնելիս անշուշտ շատ մեծ է: Պատահական չէ, որ Ադրբեջանը պատերազմն սկսել էր ոչ թե կռվի դաշտում սեպտեմբերի 27-ին առավոտյան ժամը 7-ին, այլ գիշերը՝ 12:00-ին, երբ կոտրել էին Արցախի պետական սերվերը՝ դրանով զրկելով կապի հնարավորությունից: Հաջորդ քայլը ինտերնետային լարերը կտրելն էր, այսինք թիրախավորված հարվածում էին կապի միջոցներին, որպեսզի կտրվի կապն ինչպես արտաքին աշխարհի հետ, այնպես էլ Արցախի ներսում: Պատերազմի առաջին օրերին համալիր տեղեկատվական դաշտում ունեինք համակարգման խնդիրներ. հաճախ ներքին և արտաքին լսարաններին կամ բանակի համար տրվող տեղեկությունները տարբերվում էին միմյանցից իրենց բովանդակությամբ, կար ճակատից եկող, այսինքն՝ ռազմական բնույթի տեղեկատվության պակաս: Արդյունքում հասարակության շրջանում մեծանում էր անվստահությունը պաշտոնական տեղեկատվության նկատմամբ, և մարդիկ փորձում էին գտնել ինֆորմացիայի այլընտրանքային աղբյուրներ:

Պատերազմի ավարտից հետո հանրային դժգոհությունը շատ մեծ էր տեղեկատվական քաղաքականությունից: Թվում էր, թե հրադադարից հետո ավելի հեշտ կլիներ շտկել իրավիճակը, սակայն մտահոգությունները արցախցիների մոտ շարունակվում են նաև այս փուլում: Ակնհայտ է, որ կա տեղեկատվության պակաս, ինչպես նաև օբյեկտիվ խնդիրներ՝ դրա մատուցման մեխանիզմների հետ կապված (ինտերնետի հասանելիության խնդիր, հոսանքազրկումներ և այլն): Սակայն խնդիրն ավելի է սրվում, երբ դրան գումարվում է նաև տեղեկատվական աղբյուրների կողմից տրվող տեղեկությունների օրեր անց հերքումը նույն աղբյուրների կողմից կամ տարբեր գերատեսչություններից եկող տեղեկատվական հոսքերի իրարամերժությունը: Օրինակ.

- Արցախցիները պնդում են, թե, հորդորելով վերադառնալ Արցախ, հստակ հայտարարվել է, որ պետությունը կփոխհատուցի բնակիչների կոմունալ վճարները: Այդ հայտարարությունից հետո բնակիչները վերադարձել են, սակայն 1-2 շաբաթ անց հնչել է լրիվ այլ հայտարարություն, որտեղ հստակ նշված էին կոմունալ վճարների սակագները:
- Նույն արցախցիների պնդմամբ, եղել է հայտարարություն, թե ընտանիքի յուրաքանչյուր անդամի կտրամադրվի փոխհատուցում, իսկ որոշ ժամանակ անց տարածվել է մեկ այլ հայտարարություն, ըստ որի՝ ոչ թե ընտանիքի յուրաքանչյուր անդամի, այլ ընտանիքին կտրամադրվի որոշակի գումար: Այս ամենը բնակչության մոտ առաջացրել է դժգոհության և անվստահության նոր ալիք:

Նման օրինակներ Արցախում շատ են բերում: Գուցե դրանց մի մասն իրականությանը չի համապատասխանում, գուցե որոշակի բացատրություններ էլ կան այս ամենի շուրջ, սակայն խնդիրը շարունակում է մնալ հանրային ընկալումը. մարդկանց ընկալման մեջ կան կասկածներ և դրանք հետևողական ու ճիշտ աշխատանքով փարատել է պետք:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Տեղեկատվության պակասն էլ չի խթանում վստահության վերականգնմանը: Երբ գոնե որոշակի ինֆորմացիա կա, մարդիկ խոսում են, քննարկում, բայց տեղեկատվության պակասի պատճառով ամեն մեկն սկսում է ստեղծագործել և տարածել ամեն ինչ:

Նպատակադրման կարևորությունը

Որոշ փորձագետներ պնդում են, որ մինչև ռազմական գործողությունների սկսվելը մենք արդեն տանուլ էինք տվել տեղեկատվական պատերազմը: Այդ պարտության ամենակարևոր պատճառը մեր՝ հստակ սահմանված նպատակի բացակայությունն էր, ի տարբերություն թշնամու, որն ուներ վաղուց ձևավորված նպատակ: Եթե չկա հստակ սահմանված նպատակ, տեղեկատվական հոսքերի կառավարումը դառնում է չհամակարգված, ինչն էլ բերում է հաճախ իրար հակասող հայտարարությունների: Մեզ մոտ իրավիճակը նման էր «Dr Jekyll and Mr Hyde» ֆիլմին. մի կողմից հայտարարվում էր Սարդարապատի և Հայրենական պատերազմի մասին, մյուս կողմից՝ ցավոտ զիջումների: Այս հայտարարությունները համադրելի չեն, ինչն էլ հանրության շրջանում առաջացնում էր հակասական ընկալումներ: Այսօրվա գլխավոր խնդիրը պետք է լինի մեր նպատակների հստակեցումը, որպեսզի կարողանանք ստանալ մեզ անհրաժեշտ ռեակցիաները: Հստակ սահմանված նպատակների բացակայության դեպքում անհնար է ստանալ այն ռեակցիաները, որոնք ցանկանում ենք, իսկ հաղորդակցման իմաստը ոչ թե ասելն է այն, ինչ ուզում ես ասել, այլ լսարանից ստանալ այն ռեակցիան, որն ակնկալում ես:

Երկրորդ կարևոր խնդիրը, Արիստոտելյան եռանկյունու (ethos, pathos, logos) տրամաբանությամբ էթոսի խնդիրն է՝ ո՞վ է մեր հեղինակությունը, ո՞վ է ապահովում հաղորդակցությունը հասարակության հետ: Երբ ասում ենք, թե պատերազմից հետո կորցվել է իրականացվող քաղաքականության լեգիտիմությունը, առաջին հերթին խոսքը վերաբերում է հնչող խոսքի և գործի միջև եղած ճեղքին, ինչն էլ հանգեցնում է անվստահության մթնոլորտի աճի: Այսօր շատերն անորոշության բացը լրացնելու համար կարող են անգամ հավատալ ադրբեջանական քարոզչական մեքենային: Ուստի պետք է օր առաջ լուծել էթոսի խնդիրը. եթե ներսում չես կարող հաղորդակցել, ինչպե՞ս կարող ես դրսում հաղորդակցել, ինչպիսի՞ վստահություն կարող ես ունենալ դրսում, եթե ներսում չունես այդ վստահությունը: Իսկ ներսում վստահության բացակայության պատճառով հնարավոր չի լինի մոբիլիզացնել հասարակության կոլեկտիվ գործունեությունը, առանց որի ճգնաժամային խնդիրները լուծելը կդառնա անհնար: Նորից կլինեն հաղորդակցման ոչ թե համակարգված պատկերացումներ, այլ ad hoc՝ ռեակտիվ մոտեցումներ:

Հետևաբար, հաշվի առնելով Արցախում կյանքի վերականգնման և գալիք մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությունը, հնարավորինս արագ կարիք կլինի սահմանել նոր, հստակ նպատակադրումներ և վերականգնել կորսված հավատը հրամցվող տեղեկատվության և պաշտոնական հաղորդագրությունների նկատմամբ:

Համառոտագիրը մշակվել է 2020թ. դեկտեմբերի 26-ին կայացած՝ «Հետպատերազմյան իրականություն. Հաղորդակցության խնդիրները» խորագրով առանց հրումների իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: